
Մ. Վ. ԼԱԿՐՈՉԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Մաթյուրեն Վեյսիեռ դը Լակրոզը XVIII դարի առաջին տասնամյակների Եվրոպայի նշանավոր հայագետներից է: Նրա գործունեությունը համընկնում է եվրոպական արևելագիտության ու հատկապես հայագիտության առաջին լուրջ քայլերի հետ: Ժ. Վեյտենբերգը, որը 1985 թ. “Revue des études Arméniennes” հանդեսի թիվ XIX-ում տպագրել է Լակրոզի հայ-լատիներեն բառարանը, առաջին հերթին նրան բնութագրում է հետևյալ ձևով. “Լակրոզը (1661–1739) եղել է իր ժամանակի նշանավոր արևելագետը՝ մեկը այն սակավաթիվ եվրոպացիներից, որը գիտեր և օգտագործում էր հայերենը”¹:

Մ. Վ. Լակրոզը Պրուսիայի թագավորական գրադարանի տնօրենն էր և տիրապետում էր բազմաթիվ հին ու նոր լեզուների, սակայն իր բոլոր աշխատությունները շարադրում էր ֆրանսերենով, որը դարձել էր եվրոպական զարգացած մարդկանց համար պարտադիր լեզու: Ֆրանսերենի գիտական աշխարհում խիստ տարածված լինելը բացատրում է Հ. Ավգերյանն իր կազմած գաղիերեն – հայերեն բառարանի ֆրանսերեն առաջաբանում. “Ֆրանսերենը, որ Լյուդովիկոս XIV-ի դարից սկսած՝ քաղաքակիրթ ազգերի համար դարձավ ինչ-որ տեսակի միջազգային լեզու, ընդհանրապես դեռևս տարածված է մեր օրերում”²:

Մ. Վ. Լակրոզի անունը հայտնի էր միջազգային արևելագիտության մեջ: Ֆ. Ա. Բրոկհաուզ, Բ. Ա. Էֆրոնի հանրագիտարանում կարդում ենք, որ Լակրոզը՝ բենեդիկտյան գիտնական է ու եղել է Բեռլինի ֆրանսիական քոլեջի պրոֆեսոր: Նրա երեք թվարկված աշխատությունների մեջ առաջինը նշվում է “Քրիստոնեության պատմությունը Եթովպիայում և Հայաստանում” երկր³:

Այս երկը լույս է տեսել Հազայում 1739 թվականին: Աշխատության հայկական հատվածն ուշագրավ է նրանով, որ այնտեղ գետեղված է Լակրոզի անտիպ հայ-լատիներեն բառարանի առաջաբանը, որը, անշուշտ, ունի հայագիտական որոշակի արժեք: Սույն երկի առաջաբանում հայագետը նշում է, թե իր աշխատության մեջ գտել է նոր հայտնագործումներ, որոնք անկարևոր չեն հանրութ-

¹ Տե՛ս “Revue des études Arméniennes”, t. XIX, Paris, 1985, p. 373.

² “Բառարան համառոտ ի գաղիական է ի հայ”, հ. 1, Վենետիկ, ՌՄԿՄ, էջ 3:

³ Ф. А. Брокгауз, И. А. Ефрон. Энциклопедический словарь, т. XVII, СПб., 1896, с. 266.

յան համար⁴: Առաջաբանից պարզ է դառնում, որ միջնադարին հատուկ աստվածաբանական վեճերը դեռ շարունակվում էին Լակրոզի ապրած օրերին, որոնց հեղինակներին աստվածաբանն անվանում է հերետիկոսներ: Նման մարդկանց նա համեմատում է Բաբելոնի աշտարակաշինությունը նախաձեռնած չար մարդկանց հետ⁵:

Այս աշխատության մեջ Լակրոզին հետաքրքրում է քրիստոնեական վարդապետության ճշգրիտ ընկալումն ու մատուցումը: Իսկ դրան կարող է օգնել քրիստոնեության անցյալի ուսումնասիրությունը, քանզի նոր ժամանակներում քրիստոնեական երկրների համար քաղաքական հետաքրքրություններն առավել թանկ են, քան կրոնականը⁶:

“Քրիստոնեության պատմությունը Եթովպիայում և Հայաստանում” գրքի 227 էջից մինչև 402 էջերն են վերաբերում Հայաստանին: Այդ հատվածի խորագիրն է՝ “Հայաստանի քրիստոնեության պատմությունը”: Հայաստանի քրիստոնեական ներկան պատկերելուց առաջ հեղինակը ներկայացնում է իր պատկերացումները հայ ժողովրդի պատմական անցյալի ու այդ երկրի մասին:

Մ. Վ. Լակրոզի ժամանակ հայ ժողովրդի մասին շատ քիչ գրքեր էին հրատարակվել: Դեռ Վենետիկի ու Վիեննայի Միսիթարյանները չէին հրատարակել հայ ժողովրդի պատմությանը, լեզվին վերաբերող իրենց կարևոր աշխատությունները, դեռ չէին տպագրվել Մ. Չամչյանցի “Պատմութիւն Հայոցի” երեք հատորները և դեռ չկային եվրոպական հայագիտությանը մեծ իրթան դարձած Ա. Ժ. Սեն-Մարտենի “Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության” երկու ծավալուն ու մեծարժեք հատորները⁷, չկային նաև հայերենի ու եվրոպական լեզուների բառարանները:

Մ. Վ. Լակրոզը նշում է, թե հայերը “շատ հռչակավոր էին հույների ու հռոմեացիների ժամանակներում”⁸: Նա Հայաստանի մասին իր տեղեկությունները քաղում է Ստրաբոնից, Հերոդոտոսից ու ճանապարհորդների թողած տեղեկություններից: Որպես լեզվաբան՝ Լակրոզը բառային նմանություններ է տեսնում հայերենի, մարերի և հին պարսիկների լեզուների միջև՝ հատկապես գրա-

⁴ M. V. Lacroze. Histoire du Christianisme d’Ethiopie et d’Arménie, Hague, 1739, preface. Բրոկհաուզ, Էֆրոնի բառարանում այս գրքի տպագրության թվականը նշված է 1738, հավանաբար, գրքի սկզբում դրված պրոուսական թագավորին ուղղված Լակրոզի ընծայականի թվականով:

⁵ M. V. Lacroze. Նշվ. աշխ., առաջաբան:

⁶ Նույն տեղում:

⁷ S^t u J. Saint–Martin. Mémoires historiques et géographiques sur l’Arménie, t. I, Paris, 1818, t. II, Paris, 1819.

⁸ M. V. Lacroze. Նշվ. աշխ., էջ 328:

բարի հարստությունը դիտարկելով ըստ Աստվածաշնչի: Օրինակ, դայակ բառը, որ կա հին հայերենում սնուցող նշանակությամբ, առկա է սրբազան մատյաններում: Կամ փարթամ և պատգամ բառերը, որոնք XVIII դարում հայերը դեռ գործածում են, առկա է մարերի լեզվում:

Մ. Վ. Լակրոզը սխալ է համարում բոլոր նրանց, ովքեր հայերի պատմությունն սկսում են Մաշտոցյան գրերի գյուտից հետո:

Առաջաբանի այս հատվածում Լակրոզը շատ բարձր է գնահատում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը. «Ներկայումս շատ քիչ գրագետներ գիտեն, որ մենք ունենք ողջ Աստվածաշնչի հայերեն գերագանց թարգմանությունը, որն իրականացրել են հայ գիտնականները հինգերորդ դարի սկզբին, այսինքն՝ մոտավորապես Քրիստոսի ծնունդից հետո 412 թվականին»⁹:

Մ. Վ. Լակրոզը իրեն չի համարում Հին Հայաստանի պատմության գիտակ և նախընտրում է խոսել Հայաստանի քրիստոնեական շրջանի պատմության վերաբերյալ: Նրան ծանոթ են Ֆրանչիսկոս Ռիվոլայի «Բառգիրք հայոց»¹⁰ հայերեն-լատիներեն գիրքը, ինչպես նաև Կդեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» աշխատությունը¹¹: Լակրոզը քաջատեղյակ է Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» և Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» («Գիրք աղոթից») երկին¹²: Նա ծանոթ է Գուլիեմուս և Գևորգ Վիստոն եղբայրների 1736 թ. հրատարակած Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հայերեն ու լատիներեն բնագրին¹³: Լակրոզն այդ թարգմանությունը համարում է գերագանց¹⁴, սակայն առանց հիմնավոր պատճառի կասկածում է հեղինակի՝ V դ. մատենագիր լինելու խնդրում: Իր կասկածը հայտնում է Վիստոն եղբայրներին, որոնք հերքում են այն և հաստատում, թե Մովսես Խորենացին V դ. պատմիչ է: Գևորգ Վիստոնը 1735 թ. հունիսի 19-ի նամակում գրում է. «Խորենացւոյն վրայ երկու կողման պատճառներն ալ խնամքով կշռելով՝ համառօտիւ յայտնեմ կարծիքս: Մեզի կ'երեւնայ, թէ բաւական հմտութիւն ունեցող մատենագիր մ'է, դիրահաւատ քան քննադատ և այլոց երկասիրութիւններէն օգտուելով յօրինած է զիր պատմութիւն. հաւատարիմ և խոհական, սակայն յաճախ անստոյգն ու վրիպականն իբրեւ ճշմարիտ աւանդելով: Հինգերորդ դարու մէջ ապրած է և չկայ պատճառ մը յետագայ դա-

⁹ Նույն տեղում, էջ 333:

¹⁰ Ֆր. Ռիվոլայ. Բառգիրք հայոց, Փարիզ, 1633:

¹¹ Կդ. Գալանոս. Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, Հռոմ, 1661:

¹² Տե՛ս Գրիգոր Նարեկացի. Գիրք աղոթից, Կ.Պոլիս, 1701–1702:

¹³ Տե՛ս Մովսես Խորենացի. Պատմութիւն և աշխարհագրութիւն, Լոնդոն, 1736:

¹⁴ M. V. Lacroze. Նշվ. աշխ., էջ 335:

րուց մէջ զինք դնելու, ուր ամենայն ազգային մատենագիրք և ի մասնաւորի Շնորհալի իր վիպասանականին մէջ կընդունին այդ դարուն մարդ ըլլալը”¹⁵ (ընդգծումը մերն է – Ս. Դ.):

Գ. Վիստոնի այս կարծիքը կուռ տրամաբանությամբ և անատարկելի փաստերով հիմնավորեց Ֆ. Կոնիբերը¹⁶: Մեր օրերում Սովսես Խորենացու ոսկեդարյան պատմիչ լինելուն հատուկ հետազոտություն նվիրեց խորենացիագետ Ա. Մուշեղյանը¹⁷:

Մ. Վ. Լակրոզը չի մոռանում նշել, որ Սովսես Խորենացու նկատմամբ հայերն ունեցել են մեծ պաշտամունք: Հենց սա նշանակում է, որ հայերը V դարից սկսած այդ պաշտամունքը սրբորեն պահպանել են դարերի ընթացքում:

Մ. Վ. Լակրոզը ծանոթ է Ներսես Շնորհալու կյանքին ու որոշ գործերին և նույնիսկ իր առաջաբանում դնում է նրա մահվան թվականը՝ 1173:

“Հայաստանի Քրիստոնէության պատմությունը” բաժինն անդրադարձ ունի Կիլիկյան Հայաստանի շրջանին. նրանում խոսվում է Կիլիկյան հայկական թագավորության ու այլ երկրների փոխհարաբերությունների մասին և մեջբերվում են լատինալեզու փաստաթղթեր, խոսվում ունիթորական շարժման մասին, որին կտրականապես դեմ էր հայոց եկեղեցին:

Գրքի հիմնական մասը վերաբերում է քրիստոնէական հավատի տարբեր ազգերի ծիսական սովորություններին, և, փաստորեն, այդ խնդիրները բոլորովին էլ կապ չունեն հայ եկեղեցու պատմության հետ: Պատումի առանձին հատվածներ նվիրված են Պորտուգալիայի ու Հոմի ինկվիզիցիային: Լակրոզը բացատրում է, թե ինչու հացն ու գինին համարվում են Հիսուսի մարմինն ու արյունը: Եվ այդ ընկալումը գալիս է քրիստոնէության վաղ շրջանից, ու այն դեռևս հաստատված է հին տիեզերական ժողովների ժամանակ:

Մ. Վ. Լակրոզի գրքի այս հատվածներն աստվածաբանական առումով շատ հետաքրքիր են և կարող են հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ արդի աստվածաբանների համար, եթե նրանք հաղթահարեն XVIII դարասկզբի ֆրանսերենը:

Գիրքն ավարտվում է Լակրոզի այն երազանքով, թե իր մտորումներն օգտակար կլինեն նրանց համար, ովքեր լավ կկշռադատեն դրանք և կդարձնեն իրենց սկզբունքը: Բոլոր դեպքերում այն, ինչը գրել է ինքը, երկար ժամանակ պահել է

¹⁵ Գ. Չարբհանալյան. Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ – ԺԹ), Վենետիկ, 1895, էջ 52–53:

¹⁶ Ֆ. Կոնիբեր. Մ. Խորենացույ թուականը. – “Հանդէս Ամսօրեայ”, Վիեննա, 1902, էջ 1–6, 85–90, “Մ. Խորենացույ պատմութեան ժամանակի մասին” (“Հանդէս Ամսօրեայ”, 1903, էջ 30–36, 152–157, 215–218, 317–320, 325–330):

¹⁷ Ա. Վ. Մուշեղյան. Սովսես Խորենացու դարը, Երևան, 2007:

իր սրտում և ցանկանում է, որ բոլոր քրիստոնյաները լինեն խաղաղության մեջ ու հաստատվի ճշմարտությունը: Գրքի վերջին հատվածը շատ է հիշեցնում հայ միջնադարի մեծ մտածողների նույն մտահոգությունը:

Ժ. Վեյտենբերգի՝ Լակրոզի հայ-լատիներեն բառարանին կցված առաջաբանից պարզ է դառնում, որ վերջինս նամակագրական սերտ կապերի մեջ է եղել իր ժամանակի եվրոպացի նշանավոր արևելագետների հետ, և նրա գործունեությունն ունի ճանաչողական մեծ արժեք: Նրա շնորհիվ պատկերացնում ենք XVIII դ. I կեսի եվրոպական հայագիտության մակարդակը:

Մ. Վ. Լակրոզն իր հայերեն – լատիներեն բառարանի վրա աշխատել է մոտ 12 տարի, այդ մասին նշում է տարբեր առիթներով: Աշխատանքն սկսել է 1709-ի հունիսին և ավարտել 1712-ի հունվարի 22-ին, իսկ տիտղոսաթերթի վրա դրել է 1712-ի մարտի 23 նշումը:

“Քրիստոնեության պատմությունը Եթովպիայում և Հայաստանում” գրքի մեջ, գետեղելով իր կազմած բառարանի առաջաբանը, Լակրոզը տպագրել է Լ-նոն Երկրորդի դրամի նկարը՝ մատնացույց անելով դրա վրայի հայերեն գրությունը:

Նյութական պատճառներով Լակրոզը չի կարողացել հրատարակել իր բառարանը, որը, անշուշտ, իր ժամանակին կունենար գիտական մեծ արժեք: Նա Ամստերդամում կապեր է հաստատել Ղուկաս Վանանդեցու հետ՝ նշելով, թե այդտեղի հայերեն տառերը լավագույնն են տպագրական առումով: 1739 թ. մահվանից քիչ առաջ, այլևս հույս չունենալով տեսնել իր բառարանը տպագրված, նա գրում է. “... իմ բառարանը, որն արժեցավ տասներկու տարվա իմ աշխատանքը, թերևս, ես այլևս չեմ տեսնի տպագրված”¹⁸:

Մաշտոցի անվան Մատենադարանում է պահպանվում Լակրոզի մեկ այլ աշխատություն, որը պատմական բնույթի է՝ “Համառոտ ժամանակագրություն համընդհանուր պատմության”: Այս աշխատությունն այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը: Նրանում արտահայտված դրույթներն ընդունված են այսօրվա պատմագիտության մեջ:

Գրքի նախաբանը կոչվում է “Պատմության ընդհանուր սկզբունքները”¹⁹: Լակրոզի աշխատությունը շարադրված է տրամախոսության ձևով՝ տրվում են հարցեր և դրանց հետևում են պատասխանները: Շարադրանքի նման տեսակը հիշեցնում է հույն մեծագույն փիլիսոփա Պլատոնի աշխատությունները²⁰:

¹⁸ “Revue des études Arméniennes”, t. XIX, p. 375.

¹⁹ M. La Croze. Abrégé chronologique de l’Histoire Universelle, Bruxelles, 1791, p. 1.

²⁰ Տե՛ս Պլատոն. Տրամախոսութիւնք Երթիփոռն, պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմոն, Վենետիկ, 1877, նույնի՝ Փետրն կամ հոգին անմահ, Բոստոն, 1951, նաև՝ Պլատոն. Երկեր չորս հատորով, հ. 1, Երևան, 2008:

I հարցը – Ի՞նչ է պատմությունը:

Պատասխան – Մա պատմություն է իրերի մասին, որոնք տեղի են ունեցել աշխարհում:

II հարցը – Ի՞նչ է պետք պատմության մասին գիտելիք ստանալու համար:

Պատասխան – Պետք է իմանալ աշխարհագրությունը, որը սովորեցնում է, թե անցյալի դեպքերը որտեղ են տեղի ունեցել, և ժամանակագրությունը, որը ժամանակի գիտությունն է:

III. հարցը – Ինչպե՞ս են բաժանում պատմությունը:

Պատասխան – Ընդհանրապես պատմությունը բաժանում են կրոնականի և աշխարհիկի: Առաջինը պարունակում է անցյալի սրբազան գրքերը և Նոր կտակարանը, երկրորդը՝ անցյալի բոլոր մյուս հուշարձանները:

IV. հարցը – Ինչպե՞ս են բաժանում կրոնական պատմությունը:

Պատասխան – Այն բաժանում են երեք մասի, որոնք կոչվում են. Վիճակ բնական՝ Ադամից մինչև Մովսես: Օրենք՝ գրված Մովսեսից մինչև Հիսուս Քրիստոս, և շնորհի օրենքը՝ մինչև Ավետարանի հաստատումը:

V. հարցը – Ինչպե՞ս է բաժանվում աշխարհիկ պատմությունը:

Պատասխան – Այն սովորաբար բաժանվում է երեք ժամանակի՝ մութ, անհայտ ժամանակներ, առասպելական ժամանակներ, պատմական ժամանակներ:

VI. հարցը – Ի՞նչ է նշանակում մութ ժամանակներ:

Պատասխան – Դա աշխարհաստեղծումն է՝ մինչև ջրհեղեղը:

VII. հարցը – Ո՞րն է առասպելական ժամանակը:

Պատասխան – Մա այն ժամանակն է, որ ջրհեղեղից ձգվում է մինչև օլիմպիական խաղերը:

VIII. հարցը – Ո՞րն է պատմական ժամանակը:

Պատասխան – Մա այն ժամանակն է, որ օլիմպիական խաղերից ձգվում է մինչև ներկա ժամանակը:

Մ. Վ. Լակրոզը ներկայացնում է նաև համաաշխարհային պատմության պարբերացման իր ժամանակի ընդունված գիտական սկզբունքները: Նոր շրջանում պատմությունը բաժանվում է դարաշրջանների և ժամանակահատվածների: Սահմանում է, թե ինչն է կոչվում դարաշրջան, և որն է ժամանակահատվածը: Դարաշրջանները Լակրոզը բաժանում է հետևյալ ձևով՝ I – Ջրհեղեղ, II – Աբրահամի ընտրվելը, III – Օրենքները Մովսեսին տրվելը, IV – Տրոյայի գրավումը հույների կողմից, V – Սողոմոնի՝ Երուսաղեմի տաճարի կառուցումը, VI – Հռոմի հիմնադրումը, VII – Պարսկաստանի արքա Կյուրոսը, VIII – Մեր Փրկիչ Հի-

սուս Քրիստոսի ծնունդը²¹: Նույն կերպ նա ներկայացնում է ժամանակահատվածները: Լակրոզը սահմանում է, թե ինչ են միապետություններն ու կայսրությունները: Միապետություններ են եղել ասորականը, պարսկականը, հունականը, հռոմեականը:

Մ. Վ. Լակրոզը սահմանում է նաև, թե ինչ է դեմոկրատիան: Դեմոկրատիան այն է, երբ ժողովուրդը կարողանում է մասնակցել օրենսդրությանը: Կան նաև ազնվական իշխանություններ, ինչպիսիք են Վենետիկինը և Ճենովայինը:

Հին աշխարհի կայսրություններից Լակրոզը թվարկում է Եգիպտոսինը, Չինաստանինը, Հռոմինը և Չինգիզ խանինը, որը եղել է ամենամեծը, որովհետև տարածվել է Չինաստանից մինչև Հունգարիա:

“Համառոտ ժամանակագրություն համընդհանուր պատմության” մեջ կան բազմաթիվ հարցերի պատասխաններ, որոնք ներկայացնում են հին աշխարհի ուշագրավ դրվագները: Եգիպտական բուրգերը համարվում են հին աշխարհի յոթ հրաշալիքներից միակ պահպանվածները:

Այն հարցին, թե ով է Ասորեստանի թագավորության հիմնադիրը, Մ. Վ. Լակրոզը պատասխանում է՝ Բելը, որին փոխարինեց Նինոսը²²:

Մ. Վ. Լակրոզը հին աշխարհի պատմության մեծ գիտակ է՝ հատկապես Հունաստանի: Ինչպես երևում է, նա պաշտում է Հոմերոսին և նրա անզուգական երկու պոեմները: Առաջինը՝ Իլիականը, որը նկարագրում է տրոյական պատերազմը բանաստեղծորեն, և երկրորդը, որը պատկերում է Ուլիսի վերադարձը իր հայրենի Իթակե կղզի՝ Տրոյան գրավելուց հետո:

Հին աշխարհի նշանավոր դեմքերը ժամանակագրական հերթականությամբ թվարկվում են Մ. Վ. Լակրոզի համառոտ պատմության մեջ: Նա հիշատակում է նաև Քսենոփոնի “Անաբասիսը”՝ հեղինակին կոչելով Սոկրատեսի աշակերտը, որը հունական բանական անցկացրեց բազմաթիվ բարբարոս երկրներով՝ սկսած Եփրատից մինչև Պոնտական ծովը և այնտեղից Հունաստան, ու գրեց այդ անցման պատմությունը՝ ներկայանալով ոչ պակաս գովելի գրող, որքան գորահրամանատար²³:

Մ. Վ. Լակրոզն Ալեքսանդր Մակեդոնացու ծնունդը դնում է 356 թվականին Ք. ծ. ա., այդ այն նույն թվականն էր, երբ Հերոստրատն այրեց Արտեմիսի հռչակավոր տաճարը Եփեսոսում: Ալեքսանդր Մակեդոնացին, նրա մայրը, հայրը՝ Ֆիլիպը, Մակեդոնիայի արքան, ավելի մանրամասնորեն են ներկայացված: Անշուշտ, Լակրոզին ծանոթ է հույն պատմիչ Պլուտարքոսի (46–120 թթ.) Ալեք-

²¹ M. La Croze. Նշվ. աշխ., էջ 3:

²² Նույն տեղում, էջ 11:

²³ Նույն տեղում էջ 41:

սանդր Մակեդոնացու կենսագրությունը²⁴: Նկարագրվում է, թե ինչպես Պարսկաստանը գրավելուց հետո Ալեքսանդրը խորին հարգանքով է վերաբերվում Դարեհի մորը, կնոջը, աղջիկներին՝ պահպանելով նրանց թագավորական արտոնությունները: Պլուտարքոսը պատմում է. «Այնժամ, դուրս գալով իր մերձավորների մոտ, Դարեհը ձեռքերը երկինք կարկառեց և աղերսանքով դիմեց աստվածներին. «Աստվածներ յ, դուք, որ հովանավորում եք իմ տոհմն ու թագավորությունը, տվե՛ք ինձ հաջողություն՝ վերականգնելու պարսից հզորությունը, որպեսզի իմ տերությունը նորից լինի նույնքան երջանիկ, որքան որ էր, երբ ես այն ստացա, և որպեսզի դառնալով հաղթող, ես կարողանամ երախտահատույց լինել Ալեքսանդրին այն ամենի համար, ինչ նա արեց իմ մերձավորներին, երբ ես ընկել էի դժբախտության մեջ: Իսկ եթե հատուցման ու մեծ փոփոխությունների ճակատագրական ժամը գա, երբ ընկնի պարսից տերությունը, թող ոչ ոք, բացի Ալեքսանդրից, չնստի Կյուրոսի գահին»²⁵:

Մ. Վ. Լակրոզը պատմում է նաև Ալեքսանդրի՝ դեպի Հնդկաստան կատարած արշավանքը, հնդիկ արքա Պորուսին հաղթելը, վերադարձը Բաբելոն և մահը: Այն հարցին, թե ով եղավ Մակեդոնացու հաջորդը, նա պատասխանում է, թե Ալեքսանդրը մահվանից առաջ չէր տվել որևէ հաջորդի անուն, դրա համար էլ նրա զորահրամանատարները կայսրությունը բաժանեցին երկու հզոր տերությունների. Սելևկոսը վերցրեց Արևելքը, իսկ Եգիպտոսում հիմնադրվեց Պտղոմեոսյան գերդաստանը: Մակեդոնացու մահից հետո վախճանվեց նաև նրա ուսուցիչը՝ հռչակավոր փիլիսոփա Արիստոտելը:

276-րդ կետում հարց է տրվում, թե ինչ է Եռապետությունը (Triumvirat): Պատասխանն է՝ Հռոմի երեք հզոր քաղաքացիները՝ Կեսարը, Պոմպեոսը և Կրասոսը, հռոմեական կայսրությունը բաժանում են իրենց միջև: Կեսարին հասնում է Գալիան, ուր նա պատերազմել էր 10 տարի, Պոմպեոսը վերցնում է Իսպանիան, Կրասոսը վերցնում է Սիրիան, որտեղ և պարսիկների դեմ մղած պատերազմում սպանվում է: Նա պատմում է նաև Կեսարի սենատում սպանվելը և Անտոնիոսի՝ Հռոմի դեմ պատերազմելը: Նման պատմելաձևով Լակրոզն իր համառոտ պատմությունը հասցնում է մինչև XVIII դարը:

Այս ժամանակագրությունը շատ ընդունված է եղել ողջ XVIII դարում. այն հրատարակվել է 7 անգամ և շարունակել է մասնագետներին, ուսանողությանը ծառայել է որպես յուրօրինակ դասագիրք: Լակրոզը, օրինակ, այնպես է գրում «Իլիականի» պատմական դեմքերի մասին, որ XIX դարում Փարիզում երկու տարի բարձրագույն դպրոցում սովորած Հենրիխ Շլիմանը, որ, անշուշտ, ծա-

²⁴ Պլուտարքոս. Երկեր, Երևան, 1987, էջ 44–121:

²⁵ Նույն տեղում, էջ 76:

նոթ էր Լակրոզի այս համառոտ ժամանակագրությանը, պետք է որ հավատար շնմերոսի պատմաձևերին և գտներ Տրոյան ու Միկենայի մոտ Ագամեմնոնի գերեզմանը:

Չնայած Լակրոզը գրել է համառոտ ժամանակագրություն, սակայն իր սեղմ ոճով ու պատմելաձևով շարունակում է պահպանել անտիկ մտածողության տարրերը:

Մ. Վ. Լակրոզի գիտական ժառանգությունը լայնորեն շրջանառության մեջ է դրվել XIX դ. արևելագետների, բանագետների, լեզվաբանների կողմից: Նշանավոր բանասեր և բանագետ Թեոդոր Բենֆեյը նկատել է այն ճիշտ կողմնորոշումները, որ Լակրոզն ունեցել է հայերեն ու հին պարսկերեն լեզուների որոշ ընդհանրությունների խնդրում²⁶:

Այսօր էլ XVIII դ. առաջին տասնամյակների հայագետի գիտական ժառանգությունը շարունակում է որոշ խնդիրներում պահպանել իր գիտական արդիականությունն ու արժեքը:

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИНТЕРЕСЫ М. В. ЛАКРОЗА

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Резюме

Имя Матюрена Вейсиера де Лакроза известно в международном востоковедении. В Энциклопедии Брокгауза и Эфрона мы читаем, что он был ученым-бенедиктином и являлся профессором Французского колледжа Берлина. М. В. Лакроз – один из знаменитых европейских арменоведов первых десятилетий XVIII в. Его деятельность совпадает с первыми серьезными шагами востоковедения и особенно арменоведения в Европе.

Труд Лакроза «История христианства в Эфиопии и в Армении» был опубликован в Гааге в 1739 г. Армянский раздел этого труда интересен тем, что в нем помещено предисловие неизданного армяно-латинского словаря Лакроза, которое, несомненно, представляет определенную арменоведческую ценность. В нем арменовед отмечает, что в данном труде он сделал такие открытия, которые не маловажны для общественности.

В труде Лакроза «Краткая хроника всеобщей истории» есть ответы на многочисленные вопросы, представляющие интересные эпизоды древнего мира.

Научное наследие Лакроза было введено в широкий научный оборот востоковедами, фольклористами и лингвистами XIX в. Известный филолог и фольклорист Теодор Бенфей заметил правильную ориентацию Лакроза в вопросе некоторых общностей армянского и персидского языков.

²⁶ “Revue des études Arméniennes”, t. XIX, p. 374.

И сегодня научное наследие арменоведа первых десятилетий XVIII в. в некоторых вопросах сохранило свою научную актуальность и ценность.

THE ARMENOLOGICAL INTERESTS OF M.V. LACROZE

AELITA DOLUKHANYAN

Summary

The name of Mathurin Veyssière de Lacroze is well known in international Oriental studies. In the Encyclopedia by Brockhaus and Efron we can read that Mathurin de Lacroze was a Benedictine scientist and a professor of the French college of Berlin. Lacroze is one of the famous European armenologists of the 18th century. His activity coincides with the first serious attempts of Oriental and especially Armenian studies in Europe.

The first of his listed three works is entitled “The History of Christianity in Ethiopia and Armenia”. This work was published in The Hague in 1739. Its Armenian part is interesting as it contains the preface of the unpublished Armenian-Latin Dictionary by Lacroze, which has a certain value for Armenian studies. In the preface of this work the author notes that he has made in it such discoveries which are of no less importance for the public.

In the work “Brief Chronicle of the Universal History” by Lacroze there are answers to numerous questions presenting interesting episodes of the Ancient World.

The scientific legacy of Lacroze was introduced into wide scientific circulation by orientalists, folklorists and linguists of the 19th century.

The well known philologist and folklorist Theodore Benfey noticed the right orientation of Lacroze in the issue of some community between Armenian and Persian languages.

Up to day the scientific legacy of the first decades of the 18th century of the armenologist has preserved in some issues its scientific and contemporary value.